# 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

## *2.2. ՀՀ պետական պարտք (ներքին և արտաքին)*

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տվյալների ՀՀ պետական պարտքը 30.09.2000թ. դրությամբ կազմել է 481280,4 մլն. դրամ, որից ներքին պարտքը (պետական կարճաժամկետ պարտատոմսեր և ՀՀ ԿԲ վարկեր) կազմել է 31491,53 մլն. դրամ, իսկ արտաքինը` (վարկեր` տրամադրված ՀՀ կառավարությանը, ՀՀ ԿԲ-ին և ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի երաշխիքներով) 449788,87[1] մլն. դրամ, կամ 837,315 մլն ԱՄՆ դոլար:

### *Ներքին պարտք*

2000թ. սեպտեմբերի 30–ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվել 17919,14 մլն. դրամի պետական կարճաժամկետ պարտատոմսեր, ինչը 1999թ. դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել է 5259,45 մլն. դրամով, կամ 22,7%-ով:

**Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կառուցվածքն ըստ ժամկետայնության**

*(մլն. դրամ)*

| | 1-10 շաբաթ | 11-20 շաբաթ | 21-30 շաբաթ | 31-40 շաբաթ | 41-52 շաբաթ | 1-2 տարի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31.12.1999թ. | 518.80 | 4103.90 | 9649.07 | 5314.17 | 3592.65 | - | 23178.59 |
| 31.03.2000թ. | - | 3250,00 | 11350,00 | 4318,56 | 3007,10 | 2000,00 | 23925,66 |
| 30.06.2000թ | - | 4050.00 | 8465.14 | 3843.21 | 4507.10 | 5000.00 | 25865.45 |
| 30.09.2000թ. | - | 1300.00 | 5919.14 | 5000.00 | 5700.00 | 6572.39 | 24491.53 |

ՀՀ Կենտրոնական բանկի վարկային գծի վերաձևակերպման արդյունքում տրամադրված արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը 30.09.2000թ. դրությամբ կազմել է 7000,0 մլն. դրամ` տարեսկզբի 8000,0 մլն. դրամի դիմաց:

2000թ. ինն ամսվա ընթացքում պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն ըստ ամիսների կազմել է.

| | |
|---|---|
| Հունվար | 42,2060% |
| Փետրվար | 29,8276% |
| Մարտ | 25.5441% |
| Ապրիլ | 21.1022% |
| Մայիս | 18.3934% |
| Հունիս | 18.9972% |
| Հուլիս | 22.8335% |
| Օգոստոս | 23.2189% |
| Սեպտեմբեր | 24.1745% |

Ներքին պարտքի սպասարկման ծախսերը 2000թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 7824,9 մլն. դրամ:

---

[1] *Արտաքին պարտքի տվյալները նախնական են և հաշվարկված են 29.09.2000թ. ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դոլարի հաշվարկային փոխարժեքով (537,18 դրամ):*

### ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը

| | 30.09.1999թ. | | 31.12.1999թ. | | 31.03.2000թ. | | 30.06.2000թ. | | 30.09.2000թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մլն. ԱՄՆ դոլար | մլն. դրամ | մլն. ԱՄՆ դոլար | մլն. դրամ | մլն. ԱՄՆ դոլար | մլն. դրամ | մլն. ԱՄՆ դոլար | մլն . դրամ | մլն. ԱՄՆ դոլար | մլն. դրամ |
| Արտաքին պետական պարտք, ընդամենը այդ թվում՝ | 819.205 | 433.286 | 870.314 | 452.537 | 848.019 | 447.423 | 847.733 | 464.464 | 837.315 | 449.788 |
| ՀՀ կառավարության պարտք որից՝ | 599.919 | 317.303 | 632.865 | 329.071 | 627.390 | 331.017 | 631.273 | 345.868 | 629.264 | 338.028 |
| բազմակողմանի վարկային ծրագրեր | 408.701 | 216.166 | 437.950 | 227.721 | 435.661 | 229.859 | 439.318 | 240.698 | 436.555 | 234.509 |
| երկկողմանի վարկային ծրագրեր | 191.218 | 101.137 | 194.915 | 101.350 | 191.729 | 101.158 | 191.955 | 105.170 | 192.709 | 103.519 |
| ՀՀ կենտրոնական բանկի պարտք | 181.212 | 95.845 | 201.231 | 104.634 | 193.305 | 101.989 | 187.792 | 102.889 | 178.245 | 95.750 |
| Վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարության և ԿԲ երաշխիքներով | 34.236 | 18.108 | 29.736 | 15.462 | 19.536 | 10.308 | 19.536 | 10.704 | 18.336 | 9.849 |
| Հատուկ ծրագրեր | 3.838 | 2.030 | 6.482 | 3.370 | 7.788 | 4.109 | 9.132 | 5.003 | 11.470 | 6.161 |

ՀՀ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ 2000թ. ինն ամսվա ընթացքում նվազել է 32,999 մլն. ԱՄՆ դոլարով: Միաժամանակ, 2000թ. ինն ամսվա ընթացքում ստացվել են վարկեր 14,554 մլն. ԱՄՆ դոլարի չափով և մարվել՝ 5,504 մլն. ԱՄՆ դոլարի չափով: Նշված տարբերությունը պայմանավորված է 1 SDR /1 USD փոխարժեքների տատանումներով:

Արտաքին պարտքի սպասարկման ծախսերը 2000թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 3397,8 մլն դրամ: